

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

2013 թվականի ապրիլի 12-ին Նոր Խարբերդի գյուղական համայնքում տեղի ունեցավ հանրային լսում:

Նախագահում էր համայնքի ղեկավար Կ. Կակոյանը, քարտուղարում էր աշխատակազմի քարտուղար Գ. Աբրահամյանը:

Մասնակցում էին Արարատի մարզպետարանի ներկայացուցիչ Ա. Ասատրյանը, ավագանու անդամներ, համայնքի ղեկավարի աշխատակազմը, մշակույթի տան, գրադարանի, նրաժշտական և հանրակրթական դպրոցի տնօրեններն ու աշխատակիցները, համայնքի բնակիչներ:

**ԼՍԵՅԻՆ-** Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի ղեկավար Կ. Կակոյանի հաշվետվությունը 2012 թվականի երկրորդ կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ:

#### ԱՐՁԱՆԱԳՐՎԵՑ, որ

2012 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում Նոր Խարբերդի գյուղական համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Գյուղապետարանը բնակիչներից ստացել է 214 դիմում, համայնքի ղեկավարի և ավագանու անդամների կողմից ընդունելությունների ընթացքում բարձրացված խնդիրները քննարկվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ և տրվել են համապատասխան լուծումներ:

Գյուղապետարանը բնակիչներին տրամադրել է շուրջ 3000 տեղեկանք, ստացել 30-ից ավելի պաշտոնական նամակ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, դրանք քննարկվել են սահմանված ժամկետներում, տրվել պատասխաններ:

2012 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում համայնքի վարչական տարածքում պարբերաբար իրականացվել են սահմաքրման աշխատանքներ, մաքրվել են ոռոգման առուները, փողոցները: Ծաբայթը նրկու անգամ կատարվում է աղբահանություն:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման, սահմանների ճշտգրման և հողատեսքերի փոփոխման և ձևակերպման աշխատանքներ:

Համայնքի ղեկավարի աջակցությամբ վերադասից ստացվել և համայնքի բնակիչներին է բաժանվել թունաքիմիկատներ:

2012 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի սնփական եկամուտները ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են՝

ա/ հողի հարկ՝ 3249.2 հազար դրամ.

բ/ գույքահարկ՝ 11839.1 հազար դրամ.

գ/ տնդական տուրք՝ 2514.9 հազար դրամ.

դ/ ոչ հարկային եկամուտներ՝ 1489.2 հազար դրամ:

Համայնքում իրականացվել են մի շարք միջոցառումներ.

հանդիսավորությանը նշվել է հուլիսի 5-ը՝ Սահմանադրության օրը, սեպտեմբերի 21-ը՝

Անկախության հռչակման օրը, ուսուցչի օրը:

Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է 3845,0 հազար դրամ ֆինանսական աջակցություն.

Հուղարկավորության նպաստ՝ 2650.0 հազար դրամ.

Համայնքում նախադպրոցական դաստիարակությունը պատշաճ կազմակերպելու համար հատկացվել է 21000.0 հազար դրամ.

Երաժշտական դպրոցին 8500.0 հազար դրամ.

Աղբահանման աշխատանքների կազմակերպման համար հատկացվել է՝ 7166.7 հազար դրամ.


Բարեկարգվել և մասնակի ասֆալտապատվել են համայնքի կենտրոնական, «Ձոնալ» թաղամասի փողոցների որոշակի հատվածներ, գազի ֆիկացվել է 20 - 26 փողոցներ:

2013 թվականի 1-ին կիսամյակում նախատեսված է գազի ֆիկացնել նոր թաղամասի 4 փողոց:

Համայնքի հիմնախնդիրներից է գյուղամիջյան ճանապարհների բարեկարգումը, խմելու և ոռոգման ջրի ներքին ցանցերի վերանորոգումը, նոր թաղամասերում էլեկտրական ենթակայանների տնդադրումը:

Ընթացքում են բուժամբուլատորիայի շենքի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները:

ՀԱՄԱՅՆՔԻ



Կ. ԿԱԿՈՅԱՆ